Հավելված 1
Հրամանի No ՎՀ 08-21
«11» Հունիսի 2021թ.

<<ԷՔՈՒԻԹԻ ԷՅ ԷՄ>> ՓԲԸ

Շահերի բախման Քաղաքականություն

<<ԷՔՈՒԻԹԻ ԷՅ ԷՄ>> ՓԲԸ (<<էքուիթի էյ էմ>>) ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից լիզենզավորված և կարգավորվող ընկերություն է և սույն փաստաթուղթը կազմված է ՀՀ օրենքների, ԿԲ կանոնների և պահանջներին համապատասխան: Սույն փաստաթուղթը <<էքուիթի էյ էմ>> ՓԲԸ-ի սեփականություն է, որի բովանդակությունը խիստ գաղտնի է և Ընկերությունից դուրս տարածման ենթակա չէ: Սույն փաստաթղթի ցանկացած անձնական օրինակ պետք է վերադարձվի <<էքուիթի էյ էմ>> ՓԲԸ-ին՝ աշխատանքային հարաբերությունների դադարման դեպքում:

Բովանդակություն

1. Ներածություն 4
2. Քաղաքականության նպատակը 4
3. Կիրառման շրջանակը 4
4. Շահերի բախումը 5
   4.1 Համապատասխան կանոնները և ղեկավար սկզբունքները 5
   4.2 Հակասությունների տեսակները 6
   4.3 Որտեղ են առաջանում շահերի բախումը 8
5. Շահերի բախման կառավարումը 10
6. Տեղեկատվության բացահայտումը հաճախորդներին 16
7. Դերակատարումներն ու Պարտականությունները 17
8. Տեղեկատվության պահպանումը 20
9. Հաշվետվությունների ներկայացումը 20
10. Քաղաքականության վերանայումը և հաստատումը 21

Սահմանումներ՝

Հասկացություն	Սահմանում
Շահերի բախում	Շահերի բախումը՝ անձի կամ իր ընտանիքի անդամների մասնավոր շահերի և հանրային պարտավորությունների միջև բախումն է, ըստ որի անձն ունի մասնավոր կարգավիճակից բխող շահեր, ինչը կարող է անպատշաճ կերպով ազդել իր պաշտոնական պարտականությունների ու գործառույթների կատարման վրա կամ կարող է վտանգել նրա անաչառությունը, օբյեկտիվությունը և անկախությունը *(օրինակ՝ մեկ այլ պետական մարմնից կամ հասպատությունից):*
Հնարավոր հակասություն	Հնարավոր հակասություն առաջանում է, երբ անձն ունի մասնավոր շահեր, որոնք հակասում են այդ անձի հանրային պարտավորությանը, եթե նա հետագայում ներգրավվի համապատասխան (այսինքն՝ հակասական) պաշտոնեական գործառույթների կատարման մեջ:
Շահերի ենթադրյալ բախում	Շահերի ենթադրյալ բախումն այն է, երբ յուրաքանչյուր ողջամիտ անձ կարող է համարել, որ դա կարող է ազդել անհատի վրա իր պարտականությունների կատարման ընթացքում:

1. Ներածություն

<<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենքի, ինչպես նաև միջազգային ընդունված սկզբունքների համաձայն, Էքուիթի Էյ Էմ-ը պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործարքներ կնքելուց, որոնք կարող են առաջացնել շահերի բախում իր և հաճախորդների միջև, և ըստ այդմ, հաստատել ու գործարկել արդյունավետ կազմակերպչական և վարչական կարգավորումներ՝ նպատակ ունենալով ձեռնարկելու բոլոր ողջամիտ քայլերը՝ շահերի բախումը բացահայտելու, ուսումնասիրելու, կանխելու և կառավարելու ուղղությամբ: Այդ նպատակով, Էքուիթի Էյ Էմ-ը ջանքեր է գործադրում *<<արդարացիորեն կառավարելու շահերի բախումը, ինչպես իր և հաճախորդների, այնպես էլ մեկ հաճախորդի և մյուսի միջև>>:*

Սույն քաղաքականությունը պետք է ապահովի այնպիսի ընթակարգերի գործարկումը, որոնք ուղղված են բացահայտելու, ուսումնասիրելու և կարգավորելու բոլոր հնարավոր կամ իրական հակասությունները, որպեսզի դրանք չվնասեն հաճախորդին կամ առհասարակ՝ շուկաներին:

2. Քաղաքականության նպատակը

Սույն քաղաքականության նպատակն է՝

- շահերի բախման վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, և
- ապահովել որ հակասությունների կառավարումն իրականացվի բարեվարքության և կորպորատիվ կառավարման սկզբունքների, ինչպես նաև կարգավորողի կողմից սահմանված պահանջների համապատասխան:

3. Կիրառման շրջանակը

Սույն քաղաքականությունը տարածվում է Էքուիթի Էյ Էմ-ի անձնակազմի, ինչպես նաև ուղղակի կամ անուղղակի նրանց ազդեցության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի վրա *(այսուհետ՝ փոխկապակցված անձինք)* և վերաբերում է բոլոր տեսակի հաճախորդների հետ *(օրինակ՝ մանրածախ, պրոֆեսիոնալ հաճախորդներ և շուկայի գործընկերներ*) փոխհարաբերություններին:

Սույն քաղաքականության համաձայն շահերի բախումը ներառում է, ինչպես իրական *(օրինակ՝ շահերի բախում որոնք առաջացել են)* այնպես էլ հնարավոր շահերի բախումները *(օրինակ՝ շահերի բախում, որոնք կարող են առաջանալ՝ հաշվի առնելով կոնկրետ փաստերը և հանգամանքները)*: Այն ներառում է նաև ենթադրյալ շահերի բախումը *(օրինակ՝ իրավիճակներ որոնք կարող են առաջացնել շահերի բախման ընկալում),* նույնիսկ այն դեպքում, երբ շահերի բախում իրականում գոյություն չունի:

Սույն քաղաքականությունը կարևոր է և Էքուիթի Էյ Էմ-ի աշխատակիցները պետք է մշտապես ծանոթ լինեն, հասկանան և հետևեն դրան: Շահերի բախումը չբացահայտելը և պատշաճ ձևով այն չկառավարելը կարող են հանգեցնել բացասական հետևանքների հաճախորդների, Էքուիթի Էյ Էմ-ի ու իր աշխատակիցների համար, ինչպես օրինակ՝ վնասել հեղինակությանը, հաճախորդի հետ փոխհարաբերություններին, կորցնել հաճախորդներին, ինչպես նաև կարգավորողի կողմից ենթարկվել պատժամիջոցների ու դատական հայցերի:

4. Շահերի բախումը

4.1 Համապատասխան կանոնները և ղեկավար սկզբունքները

<<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, Էքուիթի Էյ Էմ-ը պետք է հաստատի քաղաքականություններ և ընթացակարգեր՝ բացահայտելու և կանխելու այն հակասությունները որոնք կարող են բացասաբար ազդել հաճախորդի շահերի վրա:

Շահերի բախումների նկատմամբ կիրառվող սկզբունքներն են՝

- *Ընկերությունն պետք է բարեխղճորեն իրականացնի իր բիզնեսը,*
- *Ընկերությունը պետք է բավարար ուշադրություն դարձնի իր հաճախորդների շահերին և արդարացի վերաբերվի դրանց,*
- *Ընկերությունը պետք է կառավարի ինչպես իր և հաճախորդների, այնպես էլ մեկ հաճախորդի և մյուսի միջև առաջացող շահերի բախումները:*

Ընկերության կառավարման մարմինը սահմանում, վերահսկում և պատասխանատվություն է կրում կորպորատիվ կառավարման մեխանիզմների իրացման համար, որոնք ապահովում են Ընկերության արդյունավետ ու խելամիտ կառավարումը, ներառյալ Ընկերությունում պարտավորությունների տարանջատումը և շահերի բախման կանխումը:

Ընկերությունում, գործում են հակասությունների կառավարման մեխանիզմներ: Եթե այդ մեխանիզմները բավարար չեն հիմնավոր կեպով ապահովելու, որ հաճախորդի շահերին վնաս պատճառող ռիսկը կանխվի, ապա ընկերությունը պարտավոր է նախքան բիզնես հարաբերություն հաստատելը, հնարավոր հակասությունների մասին տեղեկացնել հաճախորդին:

Ընկերությունից պահանջվում է ձեռնարկել բոլոր համապատասխան քայլերը՝ Ընկերության՝ ներառյալ իր ղեկավարների, աշխատակիցների, լիազորված ներկայացուցիչների այդ թվում ուղղակի կամ անուղղակի նրանց վերահսկողության ներքո գտնվող ցանկացած այլ անձի և հաճախորդների, ինչպես նաև մեկ հաճախորդի և մյուսի միջև շահերի բախումները հայտնաբերելու, կառավարելու, արձանագրելու, կանխելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բացահայտելու համար, ինչպես նաև ունենալ շահերի բախման հետ կապված գրավոր քաղաքականություն:

4.2 Հակասությունների տեսակները

Շահերի բախում կարող է առաջանալ, երբ Էքուիթի Էյ Էմ-ը կամ իր աշխատակիցներից որևէ մեկը գործարար հարաբերության շրջանակում հաճախորդին ծառայություններ մատուցելիս՝

- հաճախորդի հաշվին կարող է ֆինանսական օգուտ ունենալ կամ խուսափել ֆինանսական կորստից,
- շահագրգռված լինել հաճախորդի անունից կատարվող գործարքի կամ նրան մատուցվող ծառայության արդյունքով, որը տարբերվում է հաճախորդի հետապնդած շահերին, և

- ֆինանսական (կամ այլ բնույթի) շահագրգռվածություն ունենալ՝ իր հաճախորդների շահերի նկատմամբ այլ հաճախորդի կամ հաճախորդների խմբի շահերին առավելություն տալու:

Որպես այդպիսին, Էքուիթի Էյ Էմ-ը ի թիվս այլոց, սահմանել է հետևյալ գործողությունները, որոնք կարող են հանգեցնել շահերի բախման.

- Երբ գործում է որպես իր սեփական հաշվի պրինցիպալ՝ հաճախորդին ներդրում վաճառելու կամ նրանից այն գնելու ժամանակ, կամ այլ կերպ այդպիսի ներդման կամ դրա հետ փոխկապակցված ներդրման հետ գործարք կատարելիս;
- հաճախորդից ծառայությունների մատուցման համար, միջնորդավճարի կամ ծառայության վճարից բացի գումարի, ապրանքի կամ ծառայությունների տեսքով խրախուսանքի ստացում,
- մեկ հաճախորդի գործարքը մյուս հաճախորդի գործարքի հետ համադրելիս, երբ Էքուիթի Էյ Էմ-ը երկու հաճախորդների համար հանդես է գալիս կամ ձգտում է հանդես գալ որպես միջնորդ գործակալ *(և ստանում է կամ պահում է միջնորդավճարներ կամ այլ գանձումներ)*:

Շահերի բախումը կարող է լինել տարբեր ձևերի. դրանք են՝

- **փաստացի** – ներառելով ընթացիկ պարտականությունների կամ շահերի միջև ուղղակի հակասություն,
- **հավանական** – ներառելով հնարավոր հետագա հակասություններ, կամ
- **ենթադրյալ** – չներառելով փաստացի հակասություն, այլ միայն հակասության ընկալում:

4.3 Որտեղ է առաջանում շահերի բախումը

Սույն քաղաքականության համաձայն, շահերի բախում կարող է առաջանալ տարբեր հարաբերություններում, որոնք հաճախ միմյանց հետ սերտ կապված են և կարող են համընկնել: Այն ներառում է շահերի բախում, որոնք առաջանում են՝

ա) հաճախորդի և էքուիթի Էյ Էմ-ի, իր աշխատակցի, կամ երրորդ անձ համարվող ներկայացուցչի միջև,

բ) երկու կամ ավելի հաճախորդների միջև, վերջիններիս էքուիթի Էյ Էմ-ի կողմից ծառայություններ մատուցելիս,

գ) էքուիթի Էյ Էմ-ի և աշխատողի, մատակարարի, երրորդ անձ ներկայացուցչի կամ նշանակալից բաժնետիրոջ միջև,

դ) երկու կամ ավելի աշխատակիցների կամ էքուիթի խմբի ընկերությունների միջև:

Ստորև ներկայացված են այն իրավիճակները, որոնք կարող են առաջացնել շահերի բախում՝

ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ/ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Անձնակազմի վարձատրությունը կարող է մասամբ կախված լինել եկամտի կամ վաճառքի գծով դրված ցուցանիշների նկատմամբ կատարողականից: Վաճառքի կամ եկամտի այդ ցուցանիշներին հասնելու խրախուսական միջոցները կարող են հակասություն առաջացնել հաճախորդի լավագույն շահերին համապատասխան գործելու պարտավորության և այդ աշխատողների շահերի միջև:

Խրախուսանքի այդ համակարգերը կարող են դրդել էքուիթի Էյ Էմ-ի անձնակազմին՝ նախապատվություն տալու մեկ հաճախորդին մյուսի նկատմամբ կամ դրդել աշխատակիցներին մերժելու բողոքները կամ բավարարելու դեպքում հնարավորինս քիչ փոխհատուցել, անկախ այն ամենից, հաճախորներին արդարացի են վերաբերվել, թե ոչ:

ՆՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Էքուիթի Էյ Էմ-ի աշխատակիցները կարող են ժամանակ առ ժամանակ երրորդ անձանցից, օրինակ՝ ապրանքներ կամ ծառայություն մատուցող ընկերություններից ընդունել նվերներ կամ հյուրասիրություններ: Արդյունքում, հակասություն կարող է առաջանալ Էքուիթի Էյ Էմ-ի կամ նրա աշխատակիցների շահերի միջև ովքեր կարող են հաճախորդի լավագույն շահերին համապատասխան գործելու պարտավորության համեմատ նախապատվություն տալ ապրանքներ կամ ծառայություններ մատուցող երրորդ անձանց կողմից առաջարկվող նվերներին կամ հյուրասիրությանը:

ՍԵՐՏ ԿԱՊԵՐԸ

<<Սերտ կապերը>> այլ ընկերությունների հետ, որոնք կարող են ներազդել Էքուիթի Էյ Էմ-ի որոշման վրա՝ բիզնես իրականացնելիս նախապատվություն տալով մեկ միջնորդին կամ մեկ մատակարարին մյուսի նկատմամբ՝ անկախ հաճախորդի շահերից:

ԲԻԶՆԵՍ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ավագ ղեկավարության ձգտումը՝ զուտ շահույթն առավելագույնի հասցնելու, կարող է անհամատեղելի լինել հաճախորդի բողոքներն արդարացի լուծելու պարտավորության հետ:

ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաճախորդների հետ անձնական փոխհարաբերությունները կարող են ազդեցություն ունենալ անձնակազմի վրա՝ առավելություն տալով մեկ հաճախորդի բողոքին կամ պահանջին մյուսի համեմատ:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԲԻԶՆԵՍ ՇԱՀԵՐԸ

Էքուիթի Էյ Էմ-ի տնօրենը կամ աշխատակիցը կարող է լինել այլ ընկերության տնօրեն, որի շահերը կարող են հակասել Էքուիթի Էյ Էմ-ի կամ իրենց հաճախորդների շահերին:

equiti

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐԸ

Այն դեպքում, երբ ֆինանսական խրախուսանքներն ուղղված են հաճախորդի կամ խմբի ընտրությանը, այն կարող է ազդել Հաճախորդներին արդարացի վերաբերվելու սկզբունքներին:

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Այն դեպքում, երբ ածանցյալ գործիքներով գործարքներ կատարելու համար Էքուիթի Էյ Էմ-ի աշխատակիցը բացում է անձնական հաշիվ և ընկերության հաճախորդն ունի այնպիսի շահեր, որոնք հնարավոր է հակասեն նման գործարքներին:

ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հաճախորդի պատվերները կարող են այնպես մշակվել, որ Ընկերությունը կամ իր աշխատակիցները կամ որևէ հաճախորդ օգտվի այլ հաճախորդների հաշվին *(օրինակ՝ հաճախորդի պատվերների նկատմամբ առավելություն տրվում է սեփական պատվերների կատարմանը):*

ԱՈՒԹՍՈՐՍԻՆԳԸ

Խմբի անդամ ընկերությունը Էքուիթի Էյ Էմ-ի անունից կարող է որոշակի գործողություններ կատարել, որոնք կարող են ընկալվել, որպես հնարավոր շահերի բախման տիրույթ:
Վերոնշյալ ցանկը սպառիչ չէ և կարող են լինել՝ իրական կամ հավանական շահերի բախում առաջացնող այլ իրավիճակներ: Եթե վստահ չեք, որ ծագել է հակասություն կամ կարող է ծագել ապագայում, ապա խնդրում ենք խորհրդակցել Էքուիթի Էյ Էմ-ի Համապատասխանության դեպարտամենտի հետ:

5. Շահերի բախման կառավարումը

Շահերի բախումը կառավարելու կամ կանխելու ուղղությամբ Էքուիթի Էյ Էմ-ը ձեռնարկում է հետևյալ միջոցառումները՝

- **Քաղաքականությունները և ընթացակարգերը**

Բիզնես գործունեության ամբողջ ընթացքում, հնարավոր շահերի բախումները կանխելու ու կառավարելու, ինչպես նաև հաճախորդի փաստաթղթերը, տվյալները մշտապես անվտանգ ու ապահով պահելու նպատակով, ընդունվում են համապատասխան քաղաքականություններ և ընթացակարգեր:

Անձնակազմը ապահոված է սույն քաղաքականության և ընթացակարգերի վերաբերյալ համապատասխան մակարդակի ուղեցույցերով և ավագ ղեկավարները պատասխանատու են ապահովել ներդրված վերահսկողական համակարգերի և մեխանիզմների հուսալիությունը և համարժեքությունը՝ առաջացող ցանկացած հակասություն հայտանաբերելու, կանխելու և կառավարելու ուղղությամբ:

Ընկերությունը վարում է բոլոր հակասությունների ու դրանց լուծման եղանակների գրանցման ընթացիկ ռեգիստր, հետևաբար, վերահսկում է հնարավոր հակասություններն ու ձեռնարկում արդյունավետ միջոցներ՝ հաճախորդի շահերի վրա ոչ արդարացի ազդեցությունը կանխելու ուղղությամբ:

Աշխատակիցները համապատասխան ձևով *(ըստ Հավելված 1-ի)* Համապատասխանության դեպարտամենտին տեղեկացնում են իրենց աշխատանքի ընթացքում առաջացող իրական և հնարավոր շահերի բախման վերաբերյալ:

Սույն քաղաքականությունները և ընթացակարգերը տարեկան առնվազն մեկ անգամ ենթակա են վերանայման:

- **Խմբի մակարդակում տեղեկատվական արգելքները**

Տեղեկատվական արգելքները, որոնք հաճախ կոչվում են «Չինական Պատեր», համակարգեր են *(որոնք ներառում են կանոններ, ընթացակարգեր, ֆիզիկական փարանջատումներ և կազմակերպական բնույթի միջոցառումներ)*, որոնք ուղղված են երաշխավորելու, որ Էքուիթի Էյ Էմ-ի բիզնեսի մի մասի աշխատակցների կողմից ձեռք բերված կամ մշակված տեղեկությունները չեն փոխանցվում մեկ այլ մասի աշխատակիցներին կամ նրանց փոխկապակցված անձանց:

Էքուիթի Էյ Էմ-ը գործում է <<ծառայողական անհրաժեշտության>> սկզբունքի հիման վրա՝ համաձայն որի, գաղտնի տեղեկությունները կարող է բացահայտվել միայն այն աշխատակիցներին, ում դրանք անհրաժեշտ են՝ հաճախորդի օրինական շահերը սպասարկելու համար՝ միաժամանակ երաշխավորելով դրանց գաղտնիությունը: Համակարգերին և աշխատավայրերին հասանելիությունը վերահսկվում է SS բաժնի կողմից:

- **Գաղտնիությունը**

<<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի և մեր գործառնական ընթացակարգերի համաձայն, թվարկված տեղեկությունները դիտվում են որպես գաղտնի: Որոշ տեղեկություններ *(այսինքն զգայուն բնույթի տվյալներ)* կարող են բացահայտվել աշխատակիցներին միայն այն դեպքում, եթե դրանք անհրաժեշտ են իրենց պարտավորությունների կատարման համար:

- **Պարտավորությունների տարանջատումը**

Էքուիթի Էյ Էմ-ը կարևորում է պարտավորությունների տարանջատման պահպանումը որպես շահերի բախման կառավարման ու կանխարգելման հիմնարար միջոց: Ըստ այդմ, պարտավորության տարանջատման սկզբունքներն արտացոլվում են ընկերության կազմակերպական կառուցվածքներում, ընթացակարգերում, հաշվետվությունների ներկայացման գործընթացներում և ներքին հսկողություններում:

- **Վարձատրությունը**

Էքուիթի Էյ Էմ-ում գործում է <<Վարձատրության քաղաքականություն>>, որն ապահովում է, որ իր աշխատակիցները կփոխհատուցվեն ոչ միայն քանաքական առևտրային չափանիշների, այլև այն չափանիշների հիման վրա, որոնք հաշվի են առնում նորմատիվ պահանջներին համապատասխանությունը, հաճախորդներին արդարացի վերաբերվելու և հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակը:

- **Հաճախորդներին արդարացի վերաբերվելը**

Էքուիթի Էյ Էմ-ում գործում է <<Հաճախորդներին արդարացի վերաբերվելու մասին քաղաքականություն>>, որն ապահովում է Էքուիթի Էյ Էմ-ի՝ իր հաճախորդների նկատմամբ արդար արդյունքների անվերապահ ապահովում և որակյալ ծառայությունների մատուցում:

- **Սոցիալական մեդիան և ֆինանասական խրախուսանքները**

Էքուիթի Էյ Էմ-ում գործում է <<Սոցիալական մեդիա և ֆինանսական խրախուսանքների մասին քաղաքականություն>>, որն ապահովում է, որ բոլոր ֆինասնական խրախուսանքները հաստատվում են գործող օրենսդրության համապատասխան:

- **Ազդարարումը**

Էքուիթի Էյ Էմ-ում գործում է աշխատակիցների կողմից իրենց գործընկերների կատարած ցանկացած ապօրինության մասին հայտնելու ընթացակարգ:

- **Կոռուպցիա դեմ պայքարը**

Էքուիթի Էյ Էմ-ը խստորեն արգելում է որևէ անհատի կամ փոխկապակցված անձի արժեքավոր որևէ բան առաջարկել կամ ընդունել *(ուղղակի կամ անուղղակի)*՝ ոչ պատշաճ կերպով բիզնես ձեռք բերելու կամ պահելու կամ այլ կերպ բիզնես օգուտներ ստանալու (կաշառք) նպատակով, անկախ նրանից այն կատարվում է մասնավոր անձի շահերի, Էքուիթի Էյ Էմ-ի կամ մեր հաճախորդների համար:

- **Նվերները և հյուրասիրությունը**

Էքուիթի Էյ Էմ-ում գործում են քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք ապահովում են, որ տվյալ հանգամանքներում ստացված կամ տրամադրված նվերները և հյուրասիրությունները արդարացված են և դժվար թե կարող են ազդել շահագրգիռ անձանց մասնագիտական դատողությունների վրա:

Նվերների և հյուրասիրության կենտրոնացված գրացումները վարում է Համապատասխանության դեպարտամենտը:

- **Պատվերների կատարումը**

Էքուիթի Էյ Էմ-ում գործում է <<Պատվերների կատարման քաղաքականություն>>, որը սահմանում է, որ հաճախորդի անունից պատվերների կատարելիս, մենք հետևողականորեն կձեռնարկենք բոլոր անհրաժեշտ քայլերը՝ հաճախորդների համար հնարավոր լավագույն արդյունքներ ապահովելու ուղղությամբ:

- **Հեռախոսազանգերի և էլեկտրոնային հաղորդակցությունների ձայնագրառումը**

Էքուիթի Էյ Էմ-ը ձայնագրառում է ներդրումային ծառայությունների մատուցման և գործողությունների կատաման հետ կապված համապատասխան հեռախոսային և էլեկտրոնային հաղորդակցությունները:

- **Մոնիտորինգը և ներքին վերահսկողությունը**

Համապատասխանության դեպարտամենտը վարում և պարբերաբար թարմացնում է մատուցվող այն ծառայությունների տեսակների վերաբերյալ գրառումները, որտեղ առաջացել են կամ կարող են առաջանալ շահերի բախումներ՝ հանգեցնելով մեկ կամ մի քանի հաճախորդների շահերին վնասելու նյութական ռիսկի: Գրանցամատյաններում գրանցվում են նաև այն միջոցները որոնցով շահերի բախումները կառավարվել են (ներառյալ բացահայտման և արգելման միջոցով, ըստ անհրաժեշտության):

- **Բիզնեսի հետ չկապված շահերը**

Էքուիթի Էյ Էմ-ի որևէ աշխատակից չի կարող զբաղվել լրացուցիչ այլ գործունեությամբ՝ առանց Համապատասխանության դեպարտամենտի, անմիջական ղեկավարի և տնօրենի նախնական գրավոր համաձայնության: Որոշ դեպքերում, համաձայնությունը կարող է մերժվել կամ տրվել որոշ նախապայմաններով: Էքուիթի Էյ Էմ-ի աշխատակիցները չեն կարող

նշանակվել տնօրինության կամ անձնական վստահորդի պաշտոնին առանց Համապատասխանության դեպարտամենտի գրավոր հաստատման:
Համապատասխանության դեպարտամենտը վարում է բոլոր՝ բիզնեսի հետ չկապված շահերի ռեգիստրը:

- **Բարեվարքության կանոնները, Համապատասխանության ձեռնարկը, Անձնական հաշվով գործարքների կատարումը**

Բոլոր աշխատակիցները և փոխկապակցված անձինք պետք է հավատարիմ մնան Էքուիթի Էյ Էմ-ի <<Բարեվարքության կանոններին>>, <<Համապատասխանության ձեռնարկին>> և <<Անձնական հաշիվներով գործարքների կատարման քաղաքականությանը>>: Դրանք ուղղված են ապահովելու, որ որևէ գործարք չի ներառում շահերի բախում և ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործում, ծառայողական կամ հաճախորդի գաղտնի տեղեկատվություն, և այդպիսի գործարքների արդյունքում հաճախորդները չեն հայտնվում անբարենպաստ վիճակում:

- **Խրախուսման կանոնները**

Որպես ներդրումային ընկերություն, Էքուիթի Էյ Էմ-ը կոչված է հաճախորդներին մատուցել ազնիվ, արդար և պրոֆեսիոնալ ներդրումային ծառայություններ: Այդ պատճառով, Էքուիթի Էյ Էմ-ը գործում է այն հիմնական նախապայմանով, որ ներդրումային և հարակից այլ ծառայությունների հետ կապված որևէ խրախուսական միջոց (դրամական և ոչ դրամական օգուտներ) չի կարող ստացվել, բացառությամբ, եթե դրանք չեն որակվում որպես աննշան ոչ-դրամական օգուտներ (այսինքն՝ որոնք կոչված են բարձրացնելու հաճախորդին մատուցվող ծառայության որակը և ունեն այնպիսի մաշտաբ ու բնույթ, որոնք չեն կարող գնահատվել, որպես Էքուիթի էյ Էմ-ի՝ հաճախորդի լավագույն շահերին համապատասխան գործելու պարտավորության խախտում):

- **Ծառայությունների մատուցման պայմանագրերը**

Աութսորսինգի հետ կապված հնարավոր հակասությունները կարգավորվում են ծառայությունների մատուցման պայմանագրի և շահագրգիռ կողմերի միջև առկա հարաբերությունների և գործողությունների հետագա ուսումնասիրության միջոցով: Այդ առումով անհրաժեշտ բացահայտումները պետք է կատարվեն որպես վերջին միջոց, եթե նպատակները կամ կատարողականը չեն համապատասխանում հաճախորդի պահանջները բավարարելու համար նախատեսված հետևողականորեն բարձր որակին:

- **Թրեյնինգը**

Ընկերությունը ունի համապարփակ վերապատրաստման ծրագիր, որը առնվազն տարեկան վերանայվում է Համապատասխանության դեպարտամենտի կողմից և դրանում ներառվում են՝ հաճախորդների հանդեպ արդարացի վերաբերմունքի, բարեվարքության կանոնների, շահերի բախումների վերաբերյալ թեմաները:

6. Տեղեկատվության բացահայտումը հաճախորդներին

Եթե Էքուիթի Էյ Էմ-ի կողմից հաստատված և իրականացված կազմակերպչական և վարչական միջոցները բավարար չեն վստահաբար ապահովելու, որ հաճախորդի շահերի վնաս պատճառող ռիսկերը կկանխվեն, ապա Էքուիթի Էյ Էմ-ը, նախքան բիզնես գործունեություն սկսելը, հաճախորդների համար հստակ կբացահայտի շահերի բախման ընդհանուր բնույթը և աղբյուրները՝ տվյալ ռիսկերը մեղմելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելով:

Համապատասխան բացահայտումը պետք է՝

- կատարվի հուսալի ձևով (նամակ, էլէկտրոնային նամակ, և այլն),
- հստակ նշի ընկերության կողմից այդ հակասությունը կանխելու և կառավարելու համար ձեռնարկված կազմակերպչական և վարչական միջոցները, որոնք բավարար չեն վստահ ապահովելու, որ հաճախորդի շահերին վնաս պատճառող ռիսկերը կկանխվեն,
- կոնկրետ նկարագրի քննարկվող շահերի բախումը,

- հաճախորդին բացատրի այն ռիսկերը, որոնք առաջանում են շահերի բախման արդյունքում, և
- ներառի բավարար տվյալներ՝ հաշվի առնելով հաճախորդի բնույթը՝ հնարավորություն տալով վերջինիս կայացնել ծառայության հետ կապված տեղեկացված որոշում, որի շրջանակում առաջանում է շահերի բախում:

Եթե Էքուիթի Էյ Էմ-ը ունի նյութական շահագրգռվածություն հաճախորդի հետ կամ նրա համար կնքվող գործարքում կամ հարաբերությունում, որն առաջացնում է իրական կամ հավանական շահերի բախում, ապա գործարքի կնքման հետ կապված որևիցե գործողություն չի կատարվում, քանի դեռ չեն ձեռնարկվել հաճախորդին արդարացի վերաբերվելու ապահովմանն ուղղված բոլոր ողջամիտ քայլերը:

7. Դերակատարումներն ու Պարտականությունները

Որպես Էքուիթի Էյ Էմ-ի՝ հակասությունների կառավարման մոտեցման մի մաս, աշխատակիցները պետք կատարեն ստորև նկարագրված պարտականությունները՝ Ընկերությունում իրենց գործառույթները կատարելիս՝

Պատասխանատու անձինք	Պարտավորություն
Տնօրենների խորհուրդը (կամ գործադիր տնօրենը՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում).	• Հաստատել Շահերի Բախման քաղաքականությունը, • Նախաձեռնողականություն դրսևորել շահերի բախումները հայտնաբերելու ուղղությամբ, որը բխում է Խորհրդի իրենց կարգավիճակից, ինչպես նաև բացահայտել կիրառելի կանոններով պահանջվող շահերի բախումները, • խթանել և խրախուսել բարեվարքության մշակույթը անձնակազմի բոլոր մակարդակներում, • Վերջնական պատասխանատվություն է կրում՝ վերահսկողության համապատասխան համակարգ ներդնելու և պահպանելու համար, այդ թվում շահերի բախումների հետ կապված:

Ավագ Ղեկավարություն	• Պատասխանատու է ապահովել, որպեսզի բոլոր համապատասխան աշխատակիցները իրազեկված լինեն շահերի բախման ռիսկերը բացահայտելու և զեկուցելու, ինչպես նաև Համապատասխանության դեպարտամենտի և միմյանց հետ համագործակցելու իրենց պարտականությունների մասին, • Վերահսկողություն սահմանել Ընկերության իրենց պատասխանատվության ենթակա համապատասխան ոլորտներում առաջացող շահերի բախումները նույնականացնելու, փաստաթղթավորելու, տարածելու և կառավարելու նկատմամբ, • Երաշխավորել և խրախուսել այնպիսի մշակույթ, որը ընդգծում է հաճախորդների նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի և շահերի բախումների արդարացի լուծման կարևորությունը, • Մասնակցել՝ շահերի բախումների նույնականացման, փաստաթղթավորման, տարածման, կառավարման և ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ քաղաքականությունների, ընթացակարգերի և միջոցառումների իրականացմանը, • Մասնակցել քաղաքականությունների, ընթացակարգերի և ակնկալիքների հստակորեն ներկայացմանը, ինչպես նաև Ընկերությունում լավագույն փորձի փոխանակմանը, • ամբողջական պատկերացում կազմել բիզնեսի շրջանակում իրական և հավանական շահերի բախումների բացահայտման վերաբերյալ, ինչպես նաև նպաստել՝ հակասությունների լուծման հիմքերի և մեթոդների հետ կապված տեղեկացված եզրահանգումների կայացմանը, • Բարձրացնել անձնակազմի իրազեկվածությունը և նպաստել նրանց պատրաստակամությանն անցնելու կանոնավոր դասընթացներ՝ ինչպես ներածական այնպես էլ խորացված թրեյնինգների ձևով, • Դիտարկել հետևանքները և, ըստ անհրաժեշտության, ձեռնարկել ուղղիչ

	գործողություններ կատարողականի գնահատման կամ խրախուսման համակարգերի հետ կապված, որոնք կարող են խթանել անձնակազմի աշխատակիցներին գործելու իրենց պարտականությունների և պատասխանատվության համաձայն, • Օգտագործել կառավարչական տեղեկատվությունը վերոնշյալ խնդիրների վերաբերյալ բավարար չափով տեղեկացված լինելու և թարմացնելու հետ կապված:
Համապատասխանության Դեպարտամենտ	• Պարբերաբար վերլուծել Էքուիթի Էյ Էմ-ի շահերի բախման հետ կապված ռիսկերը և դրանց զսպմանն ուղղված գործող մեխանիզմները: Այն ընդգրկում է Ընկերության ողջ բիզնես գործունեության ներառական ուսումնասիրություն, իսկ անհրաժեշտության դեպքում կարող է ներառել նաև Խմբի որևէ ընկերությունների համապատասխան գործողությունները, • Պատասխանատու է՝ կառավարման առաջին մակարդակում շահերի բախումների ռիսկերի վերահսկողության, մոնիտորինգի և հակազդելու համար, • Պատասխանատու է տրամադրել խորհրդատվություն, որը կօգնի Էքուիթի Էյ Էմ-ին գործել իրավական և կարգավորող պարտավորությունների և բարձր էթիկայի բիզնես չափանիշներին համահունչ, • Պարբերաբար վերանայել Շահերի բախումների քաղաքականությունը և Համապաստասխան օրենքների և կանոնակարգերի պահանջներին համահունչ վարել հակասությունների ռեգիստր, • Ողջ անձնակազմին ապահովել համապատասխան թրեյնինգով:
Ամբողջ անձնակազմը	• Հետևել սույն քաղաքականությանը և շահերի բախումների մասին անմիջապես տեղեկացնել իրենց անմիջական ղեկավարին/Համապատասխանության դեպարտամենտին, • Գործել ազնիվ և խոհեմ,

	• Հնարավորության դեպքում խուսափել շահերի բախումներ առաջացնող իրավիճակներից հետևյալ դեպքերում՝ ○ անձնական ֆինանսական շահեր, ○ ընտանիքի անդամներ կամ անձնական սերտ հարաբերություններ, ○ նախորդ, ներկա կամ ապագայում հնարավոր ներգրավածություն որևէ գործողությունում կամ նախաձեռնությունում (կլինի դա ընկերությունում կամ դրա սահմաններից դուրս) կամ ○ ընկերությունում տարբեր դերակատարումներ և պարտականություններ: • Անցնել Համապատասխանության դեպարտամենտի կողմից նախատեսված բոլոր թրեյնինգները և վերապատրաստումները:

8. Տեղեկատվության պահպանումը

Էքուիթի Էյ Էմ-ը հաշվառում է ցանկացած հանգամանք, որի դեպքում կարող է առաջանալ կամ իր գործունեության արդյունքում սույն Քաղաքականության հիմքերով առաջացել է շահերի բախում: Ցանկացած հակասություն, որը կարող է առաջանալ բիզնեսի ընթացքում, Էքուիթի Էյ էմ-ի Համապատասխանության դեպարտամենտը գրանցում է շահերի բախման գրանցամատյանում: Այդ գրանցումները պահպանվում ու կանոնավոր կերպով թարմացվում են: Գրանցումները պահպանվում են նվազագույնը 5 տարի ժամկետով:

9. Հաշվետվությունների ներկայացումը

Շահերի բախման կամ հնարավոր հակասական իրավիճակների մասին պետք է անհապաղ տեղեկացնել Էքուիթի Էյ Էմ-ի Համապատասխանության դեպարտամենտին՝ ուղարկելով նամակ compliance@equiti.am էլեկտրոնային հասցեին:

10. Քաղաքականության վերանայումը և հաստատումը

Էքուիթի Էյ Էմ-ի Համապատասխանության թիմի պարտականությունն է համակարգել սույն քաղաքականության ամենամյա վերանայումը: Սույն Քաղաքականությունում էական փոփոխությունները ենթակա են Էքուիթի Էյ Էմ-ի տնօրենների խորհրդի հաստատմանը (կամ Գործադիր տնօրենը՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում):

Հավելված 1

Շահերի Բախման Հայտարարագրման Հայտ

(Լրացվում է տարեկան և/կամ ըստ անհրաժեշտության)

Աշխատակցի անունը: _____

Դեպարտամենտ: _____

Հրահանգներ:

Խնդրում ենք լրացնել միայն Բաժին 1, եթե հայտարարագրման ենթակա շահերի բախում առկա չէ, կամ Խնդրում ենք լրացնել Բաժին 2, եթե հայտարարագրման ենթակա շահերի բախում (իրական, ենթադրյալ կամ հնարավոր) առկա է: Ծանուցում: Եթե Դուք առաջին անգամ եք լրացնում Էքուիթի Էյ Էմ-ի ՇԲ հայտարարագրման հայտը, խնդրում ենք տեղեկացնել վերջին երեք տարիների ընթացքում բոլոր ՇԲ (կամ ոչ մի ՇԲ) մասին:

<u>Բաժին 1</u>

Կարդացել և հասկացել եմ Էքուիթի Էյ Էմ-ի Շահերի Բախման Քաղաքականությունը և այդ կապակցությամբ ինձ ուղղված բոլոր հարցերին պատասխանել եմ:

Հայտարարում եմ, որ բացահայտման ենթակա որևէ իրական, ենթադրյալ կամ հավանական շահերի բախում չունեմ:

Չեմ նախատեսում ունենալ շահերի որևէ բախում այս տարվա ընթացքում, և չունեմ չհայտարարագրված ՇԲ անցյալ 12 ամիսների ընթացքում: Եթե առաջանա շահերի որևէ բախում, պարտավորվում եմ այդ մասին տեղեկացնել էքուիթի Էյ Էմ-ի համապատասխանության դեպարտամենտին՝ նամակ ուղարկելով compliance@equiti.am էլեկտրոնային հասցեին:

_____ (Ստորագրություն)

_____(Ամսաթիվ)

<u>Բաժին 2</u>

Շահերի հայտարարագրում

Սույնով ծանուցում եմ, որ իմ և Էքուիթի Էյ Էմ-ի կամ մեկ այլ ընկերության կամ անձի միջև ցանկացած գործարքի կամ պայմանագրի կամ առաջարկվող գործարքի կամ պայմանագրի հետ կապված՝ ուղղակի կամ անուղղակի գոյություն ունեցող շահագրգռվածությունների վերաբերյալ մանրամասները ներկայացվում են ստորև՝

Այդ շահագրգռվածությունները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

Ա) Այլ արտաքին տնօրինության պաշտոններ, որոնք ես զբաղեցնում եմ, ինչպես նաև,

Բ) իմ կամ իմ ընտանիքի անդամի կողմից այլ ընկերության կանոնադրական կապիտալում ընդհանուր 25% և ավելի քվեարկող բաժնեմասերի տիրապետում:

Նման բացահայտումները ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

Ընկերություն որտեղ առկա է բաժնեմաս	**Բաժնեմասը ձեռք բերելու ամսաթիվ**	**Հայտարարագրված բաժնեմասի բնույթը**	**Եթե նախկինում հայտարարագրվել է՝ հայտարարագրման ամսաթիվը**

equiti

Շահերի այլ հայտարարագիր

No.	Հարց	Ոչ	Այո	Եթե այո, խնդրում ենք մանրմասնել
1.	Ես (կամ ինձ հետ փոխկապակցված այլ անձ) արդյոք վերջին 2 տարիների ընթացքում աշխատել են Էքուիթի Էյ Էմ-ում կամ փոխկապակցված այլ ընկերությունում:			
2.	Ես (կամ ինձ հետ փոխկապակցված այլ անձ) արդյոք խորհրդատվական ծառայություններ մատուցել է Էքուիթի Էյ Էմ-ին կամ փոխկապակցված այլ ընկերություններին:			
3.	Ես (կամ ինձ հետ փոխկապակցված այլ անձ) զբաղեցնում է պաշտոն, կամ ունի ֆինանսական շահեր այն ընկերությունում, որը Էքուիթի Էյ Էմ-ին կամ նրա հետ փոխկապակցված ընկերություններին ապահովում կամ մատակարարում է ապրանքներ կամ ծառայություններ:			
4.	Ես (կամ ինձ հետ փոխկապակցված այլ անձ) զբաղեցնում է տնօրենի, կառավարիչի կամ խորհրդատուի կամ առհասարակ աշխատակցի պաշտոն՝ Էքուիթի Էյ Էմ-ի և նրա հետ փոխկապակցված որևէ այլ ընկերության համար նշանակալից հաճախորդ կամ բաժնետեր հանդիսացող ընկերությունում կամ նրա հետ կապված կողմերը արդյոք հանդիսանում են Էքուիթի էյ էմ-ի կամ նրա հետ փոխկապակցված			

	ընկերությունում նշանակալից բաժնետեր կամ հաճախորդ:			
5.	Ես (կամ ինձ հետ փոխկապակցված այլ անձ) զբաղեցնում է տնօրենի, կառավարիչի կամ խորհրդատուի կամ աշխատակցի պաշտոն շահույթ չհետապնդող այնպիսի կազմակերպությունում, որը հիմնադրվել կամ զգալի միջոցներ է ստանում Էքուիթի Էյ Էմ-ից կամ նրա հետ փոխկապակցված ընկերությունից:			
6.	Ես (կամ ինձ հետ փոխկապակցված այլ անձ) կապված եմ կամ վերջին 2 տարիների ընթացքում աշխատել է Էքուիթի Էյ Էմ-ի, դրա դուստր ձեռնարկությունների կամ այլ փոխկապակցված ընկերության ներկա կամ անցյալ արտաքին աուդիտորների հետ:			
7.	Ես ընդունել եմ նվերներ կամ այլ օգուտներ այն շահագրգիռ անձանցից, որոնք ունեն կամ ձգտում է բիզնես իրականացնել Էքուիթի Էյ Էմ-ի հետ:			

Մերձավոր ազգականներ և ընկերներ

Խնդրում եմ թվարկել այն հնարավոր շահերի բախումները, որոնք առաջացել են աշխատանքային փոխհարաբերությունների, տնօրինության, գործընկերության կամ մերձավոր ազգականների կամ մտերիմ ընկերների նշանակալի բաժնեմասերի հետ կապված

Մնացած այլ հարցեր

Խնդրում եմ թվարկել ցանկացած այլ հարց, որը կարող է հավանական շահերի բախում առաջացնել, օրինակ՝ որոշումների կայացման կամ գնումների կատարելու լիազորություններով օժտված մարմինների/հանձնաժողովների անդամություն, գույքի իրական շահառուներ և այլն:

Հաստատում եմ, որ ծանոթացել, հասկացել և պարտավորվում եմ հետևել Էքուիթի Էյ Էմ-ի <<Շահերի բախման քաղաքականությանը>>: Հայտարարում եմ, որ Շահերի հայտարագրման հայտում նշված տեղեկությունները ճիշտ են և ամբողջական: Պարտավորվում եմ նշված որևէ հանգամանքների էական փոփոխությունների դեպքում կամ առնվազն տարին մեկ անգամ թարմացնել Շահերի բախման հայտարարագրում առկա տեղեկությունները:

Պարտավորվում եմ անհապաղ ծանուցել Էքուիթի Էյ Էմ-ի համապատասխանության դեպարտամենտին՝
ա) վեր շարադրված փաստերի ցանկացած փոփոխության դեպքում, և
բ) հետագայում ցանկացած ուղղակի կամ անուղղակի շահերի բախում առաջանալու դեպքում:

Ստորագրված՝

_____

Պաշտոն՝

_____

Ամսաթիվ՝

_____

Անմիջական ղեկավարի / Տնօրենի հայտարարագիր

Սույն ստորագրությամբ հաստատում եմ այն համոզմունքը, որ առաջացող արտաքին շահը չի ստեղծում շահերի բախում, ինչպես նաև Էքուիթի Էյ Էմ-ի հեղինակության և բարեվարքության կանոնների խախտման կամ սպառնալիքի հետ կապված ընկալում:

Անմիջական ղեկավար՝

Անունը Ազգանուն՝

_____

Պաշտոնը՝

_____

Ամսաթիվ՝

_____

Տնօրեն՝

Անուն Ազգանուն՝

_____

Պաշտոնը՝

_____

Ամսաթիվ՝

_____

Համապատասխանության հայտարարագիր

Սույն հայտարարագիրը ստուգված է և հաստատում եմ, որ այն ստորագրված է համապատասխան շահագրգիր անձանց կողմից:

Անուն Ազգանուն՝

_____

Պաշտոն՝

_____

Ամսաթիվ՝

_____

Հետագա լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտության դեպքում կարող եք խորհրդակցել Էքուիթի Էյ Էմ-ի Համապատասխանության աշխատակցի հետ.

Խնդրում ենք նկատի ունենալ, որ լրացված ձևերը պետք է ներկայավցվեն Էքուիթի Էյ Էմ-ի Համապատասխանության դեպարտամենտին՝ նամակ ուղարկելով compliance@equiti.am էլեկտրոնային հասցեին:

<<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ օրենք

Հոդված 59 ***Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության կանոնները***

1. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը պարտավոր է հաստատել իր ղեկավար անձանց և աշխատակիցների գործունեությունը կարգավորող ներքին կանոններ և կանոնակարգեր (այսուհետ՝ գործունեության կանոններ):

2. Գործունեության կանոնները պետք է ներառեն՝

1) ներդրումային ծառայություններ մատուցող անձի և ներդրումային ծառայություններ մատուցող անձի ղեկավարների և աշխատակիցների միջև շահերի բախումների կանխարգելման միջոցները.

Հոդված 63 ***Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց պարտականությունները***

1. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը պարտավոր է՝

1) ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները մատուցել պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ՝ գործելով բարեխղճորեն, ի շահ հաճախորդի (ֆիդուցիար պարտականություն).

2) ձեռնպահ մնալ իր և իր հաճախորդների միջև շահերի բախման առարկա հանդիսացող գործարքների կնքումից՝ դրա անհնարինության դեպքում նախապատվությունը տալով հաճախորդի շահերին.

3) ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցելիս ձեռնարկել բավարար միջոցներ իր և իր հաճախորդների կամ իր տարբեր հաճախորդների միջև շահերի հնարավոր բախումները կանխելու համար, իսկ դրա անհնարինության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ դրանք նվազեցնելու համար.

4) կատարել իր հաճախորդների հանձնարարականները հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գործարքի ծավալը, գինը, կատարման ժամկետը և հանձնարարականի այլ էական պայմաններից բխող առանձնահատկությունները.

5) ներդնել կազմակերպական և կառավարչական արդյունավետ միջոցներ՝ իր կողմից ներդրումային առաջարկությունների կազմման և տարածման հետ կապված շահերի բախումները կանխելու համար:

<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենք

Հոդված 90. **Խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, կառավարիչ-կազմակերպության և կառավարչի պատասխանատվությունը**

1. Խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափեն անձնական և Ընկերության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից (ֆիդուցիար պարտականություն):

Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության կամ այլ հանգամանքների ուժով Ընկերության որոշումների վրա էականորեն ազդելու հնարավորություն ունեցող անձը չպետք է դրդի խորհրդի անդամներին, Ընկերության տնօրենին (գլխավոր տնօրենին),

վարչության ու տնօրինության անդամներին, ինչպես նաև կառավարիչ կազմակերպությանը և կառավարչին՝ կայացնելու այնպիսի որոշումներ, որոնք հակասում են Ընկերության շահերին կամ այն բաժնետերերի օրինական շահերին, որոնք էական ազդեցություն չեն կարող ունենալ Ընկերության որոշումների վրա:

2. Խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն ու օրենքով սահմանված այլ անձինք Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Օրենսգրքով, սույն օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են խորհրդի կամ վարչության ու տնօրինության այն անդամները, որոնք Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Խորհրդի կամ Ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում նրանց՝ Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

Խորհրդի կամ Ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրինության անդամների, կառավարիչ-կազմակերպության և կառավարչի պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները: